ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի և «ԱԿԱՆԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2015 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագիրը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

«ԱԿԱՆԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Լեոյի փողոցի թիվ 1 հասցեում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից թվով 3 (երեք) հատ 340 քմ ընդհանուր մակերեսով բնակարանները՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«___»«___» 2015 թվականի
N ____ Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ

	Անվանումը	Մակերեսը	Քանակը /հատ/	Հարկը	Հասցեն
1.	Բնակարան	127 քմ	1	4	ք. Երևան, Լեոյի 1 (բազմաբնակարան շենք)
2.	Բնակարան	127 քմ	1	5	ք. Երևան, Լեոյի 1 (բազմաբնակարան շենք)
3.	Բնակարան	86 քմ	1	12	ք. Երևան, Լեոյի 1 (բազմաբնակարան շենք)

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան համայնքի՝ ի դեմս Երևանի քաղաքապետի և «ԱԿԱՆԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2015 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագրով «ԱԿԱՆԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է Երևան համայնքի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր և Երևան համայնքին նվիրել ք. Երևան, Լեոյի 1 հասցեում սեփականության իրավունքով «ԱԿԱՆԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հողամասում կառուցվող բազմաբնակարան շենքից 340 քմ ընդհանուր մակերեսով 3 (երեք) հատ բնակարաններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Ուստի, անհրաժեշտություն է առաջացել ավագանու որոշմամբ ընդունել Երևան համայնքին հանձնվող գույքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ